# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

***Արարատի մարզի Վեդի համայնքի Լուսաշող բնակավայրում կառուցվող կրթահամալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսումների***

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք ՀՕ-150-Ն, խմբ. 3.05.24թ.) և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2024թ. դեկտեմբերի 2-ին ժամը 12:00-ին՝ Արարատի մարզի Վեդի համայնքի Լուսաշող բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, կայացել է «ՆՈՐԱՇԵՆ» ՆՏԱԿ-ի կողմից փորձաքննության ներկայացված Լուսաշող բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսումը (2-րդ լսում):

Հանդիպմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի, «ՆՈՐԱՇԵՆ» ՆՏԱԿ-ի (նախաձեռնող), «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի (պատվիրատու), Վեդի համայնքից՝ համայնքապետարանի աշխատակիցները, Լուսաշող բնակավայրի վարչական ղեկավարը, դպրոցի տնօրենը և ուսուցչական անձնակազմը ինչպես նաև շահառու համայնքների ներկայացուցիչները:

Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ **Հ. Ֆրունզիկյանը** ողջունեց ներկաներին, ներկայացավ և խնդրեց հանդիպման մասնակիցներին ներկայանալ:

**Հ. Ֆրունզիկյանը** ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև հայտնեց, որ Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է փորձաքննության: Գնահատման հաշվետվությունը ուղղարկվել է տարբեր նախարարություններ և շրջակա միջավայրի մասնագիտական ստորաբաժանումներ որոնք իրենց առաջարկություններն ու դիտողություններն են ներկայացրել, փորձագետի կողմից փորձաքքնվել է և ուղղարկվել է լրամշակման, որը լրամշակվել է «ՆՈՐԱՇԵՆ» ՆՏԱԿ-ի կողմից: Այնուհետև ներկայացրեց շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հիմնական բացասական ազդեցությունները կապված փոշու արտանետումների հետ՝ քանդման, փորման աշխատանքների

ընթացքում, վառելիքի արտանետումների հետ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ և այլն, որոնց կանխարգելման ու մեղմման համար պետք է իրականացվեն հետևյալ մշտադիտարկումներ և միջոցառումներ՝

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում
- շինարական աղբի կանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև շին. հրապարակում կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների տեղադրում,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերին համապատասխան,
- շինարարական մեքենաների սահմանափակ տեղաշարժ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում թույլատրելի մակարդակների
- սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,
- մեքենաների անիվների լվացման և մաքրման միջոցառումներ (կոպիճե մակերեսներ)՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը իրականացնել բետոնե, ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա և այլն:

Ներկայացնելուց հետո խոսքը փոխանցեց «ՆՈՐԱՇԵՆ» ՆՏԱԿ-ի ներկայացուցիչ Գ. Բաղդասարյանին և խնդրեց ավելի մանրամասն ներկայացնի նախատեսվող գործունեությունը:

**Գ. Բաղդասարյանը** մանրամասն ներկայացրեց Լուսաշող բնակավայրում կրթահամալիրի կառուցման գնահատման հաշվետվությունը, ծանոթացրեց նախագծին և գործունեության իրականացման ընթացքում առաջացող ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, և դրանց նվազեցմանն միտված միջոցառումների շրջանակը, որից հետո ներկայացրեց կանաչապատման նախագիծը, և ասաց որ հատվելու ենթակա ծառատեսակներ տարածքում չկան, առկա են 3 բարդու ծառեր, և նախատեսվում է իրականացնել լայնամաշտաբ կանաչապատման աշխատանքներ, որոնք կներառեն գնահատման հաշվետվությամբ ներկայացված ավելի քան 64 նոր ծառերի տնկարկը և 530 թփատեսակներ, և թվարկեց կանաչապատման համար ընտրված ծառատեսակները:

**Համայնքապետարանի ներկայացուցիչը.** հարցրեց թե ինչ սկզբունքով են ընտրվել նոր տնկվող ծառատեսակներն ու քանակները, և երբ են դրանք համայնքապետարանի համապատասխան բաժնի մասնագետի հետ համաձայնեցվելու:

**Գ. Բաղդասարյանը** պատասխանեց ելնելով բնակլիմայական պայմաններից ընտրվել են վերը նշված ծառատեսակները որոնք բնորոշ են տարածքին, և նշեց որ կարող ենք քանակները փոփոխել համաձայնեցնելով վարչական ղեկավարի հետ, հավելեց նաև առաջիկայում կներկայացվի համայնքին կանաչապատման նախագիծը հաստատման:

**Հ. Ֆրունզիկյանը** հարց բարձրացրեց կապված տնկվող ծառերի խնամքի, տարծքի ոռոգման, շինարարական փուլում կենցաղային կեղտաջրերի հեռացման ինչպես նաև մշտադիտարկումների վերաբերյալ, և շինարարության ընթացքում ջրցան իրականացնելու վերաբերյալ:

**Գ. Բաղդասարյանը** պատասխանեց որ շինարարական աշխատանքների ընթացքում տեղադրվելու է ռեզերվուարներ որտեղ ջուրը հավաքվելու է և իրականացվելու ոռոգում, դրանց սպասարկումը իրականացվելու են կառուցապատող ընկերության կողմից, հետագայում դրանք կիրականացվի համայնքի կողմից, և հավելեց որ ջրցան իրականացվելու է ամբողջ շահագործվող տարածքում:

**Համայնքի ներկայացուցիչները** հարց բարձրացրեցին կապված Լուսաշող գյուղում թե խմելու ջրի և թե ոռոգման ջրի խնդրի վերաբերյալ, և արդյոք դուք դա պատրաստվում եք ապահովվել:

**Գ. Բաղդասարյանը** պատասխանեց որ ծրագրի մեջ դա չի մտնում և հավելեց որ միայն նախատեսված տարածքից դուրս իրականացվելու է 1850.98մ² անշրանցիկ տարածքի բարեկարգում և կանաչապատում տարածքից դուրս 701.76մ²:

**Համայնքի ղեկավարը** հավելեց որ բնակավայրից 100 մետր հեռավորությանբ կան աղբյուրներ որոնց միջոցով պետք է հետագայում իրականացնեն ոռոգումը:

**Դպրոցի տնօրենը** հետաքրքրվեց արդյոք ունենալու ենք առանձին կաբինետներ և լաբորատորիաներ:

**Գ. Բաղդասարյանը** պատասխանեց, որ այո՝ և լաբորատորիաներ են լինելու, և սակավաշարժ խմբերի համար նախատեսված դասասենյակներ և թեքահարթակներ, և խնդրեց նախագծող ընկերության ներկայացուցիչը հստակ նկարագրի և ներկայացնի սխեմաների տեսքով, որից հետո՝

Այլ հարցեր չհնչեցին և **Հ. Ֆրունզիկյանը** շնորհակալություն հայտնեց ներկաներին և ամփոփեց հանդիպումը:

Հանրային լսումների պատասխանատու և վարող՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն «ՊՈԱԿ» ՝

«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Հ.Ֆրունզիկյան

«ՆՈՐԱՇԵՆ » ՆՏԱԿ-ի տնօրեն /ներկայացուցիչ՝ Գ. Բաղդասարյան